

«Լոյս տայ ամենեցուն  
որ ի Տանն իցեն»  
Մտք · Ե15 :



Թ ի 5

ՓԵՏՐՈՒԱՐ 1939

# MER DOUNE


BULLETIN PAROISSIAL MENSUEL  
DE L'ÉGLISE ARMÉNIENNE  
DE PARIS.

No 5 - Février 1939

Adresse :

Le Rév. P. Tiran Nersoyan —  
Eglise Arménienne  
15, Rue Jean-Goujon, PARIS (8<sup>e</sup>)  
Tél. : Ely. 67-03

ԱՄՍԱԹԵՐԹ 238 · ՈՒՂ · ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓԱՐԻԶԻ ՎԻՃԱԿԻՆ



## ՀԱՆԳԻՄՏ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԹՈՐԳՈՄ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆԻ

ՊԱՏՐՈՒԱՐ ՔԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԽՈՐՈՒՆԿ ԿՍԿԻԺՈՎ ԿՐ ԾԱՆՈԼԵԿԱՆՆԵՐ ՎՈՐՁԱՆՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Ս. ԱԹՈՒՐԻՆ ԱՐԺԱՆՐՆԱՐԻ  
ԵՆ ՄԵԾԱՆՈՒՆ ԱԹՈՒՍԿԱԿԻՆ, Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԵՔԻՆ, ՈՐ ԻՐ ԱՅՔԵՐԸ ՎՈՒԿԱԾ Է ԱՅՈ ԱՇԽԱՐ-  
ՀԻՆ ԱՄՍՈՅՈ 10ԻՆ ՈՒՐԲԱԹ ԿԷՍՐԷ ԷՈՐ, ՈՒՂԵՐ ԱՅԻՆ ԱՐԵՆԱՏՈՒՄԷՔ, ԻՆՉԱՂԵՍ ԿՐ ՎՈՒԺԷՐ ՀԵ-  
ՆԱՊԻՐԸ, ԳՐԸ ԱՍՏԱԿԱՆՔ ՀԱՐԱԹ ՕՐ :

Մայր Աթոռէն ԷՈՐ՝ աճաւասիկ ՀԵՅ. ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱԹՈՒՆ ԱՂ Կ՝ԱՅՐԻԱՆԱՅ,  
ՏՂՆԱԺԱԺԱՅԻՆ ԱՅՈ ՕՐԵՐՈՒՆ, ՈՒՐ ԱՄԷՆԷՆ ԱՆՆԻ ՍԵՒՅԵՐ ՈՒՆԷՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ԻՇԽԱՆՆԵՐՈՒՆ Ա-  
ՍՏՆՈՐԳՈՒԹԵԱՆ ԵՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ :

Կրկնաղէս աղիտաւոր է աՅՈ ՄԵԾ ԿՐՐՈՒՄԸ, ՎՈՐՁՈՒ ԶՈՂԵՐՈՅ ՊԱՏՐԻԱՐԵՔԸ յԱՌԱՋ ԿՐ  
ՍԱՆԷՐ ՎՈՐԾ ՄՐ՝ ՈՐ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԷՐ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԵՆՂԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԺԱՐ :

Իր հոգեւոր որդիները եւ բարեկամները կը սզան անհետացումը իրենց հոգիի ազգականին, որուն անձէն ու շունչէն կը ճառագայթէր վերջին ժամանակներու մեր եկեղեցական լաւագոյն աւանդութեան լոյսն ու ջերմութիւնը: Բայց մանաւանդ Եկեղեցին կը սզայ իր լաւագոյն գործապետներէն միոյն աշխատանքէ դադարումը «աստուածադործ մշակութեան» դաշտին մէջ, ուր իր կատարած անխոնջ եւ տաժանելի դատանքէն վերջ՝ ան կը թողու մաճն իր ձեռքէն, տակաւին արտին գլուխը չհասած:

Տ. Թորգոմ Պատրիարք ծնած է 1874 սեպտ. 14/27ին Պարտիզակի մէջ, եւ մկրտուած Մկրտիչ անունով: Իր զիւղին դպրոցէն սկսեալ աշակերտած եւ հետեւած է Հոգելոյս Եղիշէ Պատրիարքին, որուն նկատմամբ անասման պաշտանք ունէր մինչեւ վերջ: Տասնեւեց տարեկանին մտած է Արմաշի Դպրեմանքը, Մաղաքիա Պատրիարքի (Օրմանեան) վերատեսչութեան օրով, 1890ին, եւ հոն վեց տարի ուսած եւ ապա կուսակրօն քահանայ ձեռնադրուած է:

Ապա տասը տարի, մինչեւ 1907, Արմաշու Դպրեմանքին մէջ հետզհետէ ուսուցչութեան, փոխ-տեսչութեան, վերատեսչութեան, եւ փոխ-վանահայրութեան (բուն վանահայրն ըլլալով Կ. Պոլսոյ Պատրիարքը) պաշտօնները վարած է, ի յայտ բերելով իր դարդացեալ եւ անձնուէր հոգեւորականի շնորհները:

Ապա ընտրուած է Առաջնորդ Սերաստիոյ թեմին, ուր իր կաղմակերպական եւ վերանորոգչական աշխատանքները, միացած իր զբաղիչ հոգեւորականի շնորհներուն, սիրոյ եւ յարգանքի անջնջելի հետքեր թողած են բոլոր սերաստահայերու սրտերուն մէջ:

Անգամ մը, 1908ին, իբրեւ պատգամաւոր կաթողիկոսական ընտրութեան համար Էջմիածին երթալէ ետք՝ 1910ին դարձեալ կ'ողեւորի Մայր Աթոռ, եւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կը ստանայ Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսէ (Իգմիրլեան): Այդ առթիւ կ'երթայ Անի, հոն ազգային յիշատակներով ներշնչուելու համար: Տարի մ'ետք՝ դարձեալ կը պատգամաւորի Էջմիածին կաթողիկոսական ընտրութեան համար:

Սերաստիոյ առաջնորդութիւնը ձգելէ եւ Կ. Պոլսու դառնալէ ետք՝ 1913ին, չորս թեմերէ միաժամանակ կ'ընտրուի առաջնորդ եւ նախագասերով Եգիպտոսի թեմը, 1914 յունիսին կը գրաւէ անոր առաջնորդական աթոռը, եւ կը մնայ հոն մինչեւ 1930, երբ կ'ընտրուի պատգարք Ս. Երուսաղէմի, եւ տարի մը ետք, իր ընտրութեան Բրիտանիոյ Թաղաւոր-Կայսեր կողմէ վաւերացումէն ետք կը դահակալէ այնտեղ:

Եգիպտոսի առաջնորդութիւնը աշխատանքի երկար շրջան մը եղած է իրեն համար: Հակառակ ոմանց կողմէ իրեն դէմ, իբրեւ Եկեղեցւոյ իշխանի, մղուած անտեղի եւ վատառողջ պայքարներուն՝ որոնց վրայ վերէն նայած է միշտ, արդիւնաւորութեամբ լի գործունէութիւն մ'ունեցած է այնտեղ, Եգիպտոսի մէջ, զարկ տալով կրթական գործի բարգաւաճման, եկեղեցիներու եւ վաժարաններու շինութեան, եւ Մեծ պատերազմի տարիներուն գաղթականներու հոգացողութեան, եւ ազգային հանգանակութեանց աշխատանքներուն: Այս կերպով՝ Եգիպտոսի թեմին մէջ Եկեղեցին մեծապէս պայծառացուցած, եւ ժողովուրդին անկեղծ ու հիացական դուրսդուրանքին արժանացած է:

Եգիպտական առաջնորդութեան ընթացքին եւ անկէ դուրս կատարած է նաեւ ընդհանուր եկեղեցականազգային հանգամանք ունեցող շատ կարեւոր գործեր: 1916ին Վեհափառ Տ. Գեորգ Կաթողիկոսէն կարգուած է նուիրակ Հնդկաստանի, ուր, ինչպէս նաեւ շրջակայ կղզիներուն մէջ, շրջան ըրած է մէկ ու կէս տարի, հանգանակելով հոգեւորելով և մեծ արդիւնաւորութիւն ձեռք բերելով:

Յետոյ՝ 1918ին, կառավարութեան հրաւերով՝ գացած է Ս. Երուսաղէմ, ուր, պատերազմի հետեւանքով ստեղծուած անկերպարան վիճակին մէջ, աշխատած է սգի ի բոլին հայոց իրաւական կացութիւնը վերահաստատելու գործին համար:

Եւ ապա՝ 1929ին Ընդհանրական Հայրապետէն կարգուած է Կաթողիկոսական Պատուիրակ Երուսաղի թեմին, եւ շրջած բոլոր երուսաղեան երկիրները. Հյոս. Եկեղեցւոյ եւ ազգին սէրը արծարծած է ամենուրեք, ուսումնասիրած է կացութիւնը, եւ տեղեկագրած է Վեհափառ Հայրապետին: Այս առթիւ է որ զբաղած է Արգարեան հիմնադրամի հարցով, եւ յաջողութեամբ կարգադրած է դայն:

Բայց իր գործունէութեան պսակը եղած է արդիւնաւորութեան տեսակէտէն՝ Երուսաղէմի պատրիարքութեան շրջանը, որ տեսած է եօթ տարիէ քիչ մ'աւելի:

Ս. Աթոռին գործերը նոր թափի մը պէտք ունէին՝ Հոգելոյս Եղիշէ Պատրիարքի վախճանումէն ի վեր. անոր օրով սկսուած գործերը պէտք էր որ յառաջ տարուէին աւելի լայն եւ տեսական հիմերու վրայ: Եւ Տ. Թորգոմ Պատրիարք հոգեկցորդ շաղկապումով մ'իր նախորդին, ձեռնարկեց այդ աշխատանքին: Իրեն հետ էին Ս. Աթոռոյ եպիսկոպոսական դասուն, Տ.Տ. Մեսրոպ, Մկրտիչ եւ այժմ հանդուցեալ Սմբատ Սրբազաններուն ինչպէս նաեւ ամբողջ Միաբանութեան սրտեռանդն եւ



ԱՄԵՆ, Տ. ԹՈՐԳՈՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԱԿՈՊՈՍ

ՀԱՅ ԴԱՏՐԻԱՐԲ ԱՌՔ. Ս. ԱԹՈՒՈՅՆ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ

(Ծնվ. 1874. Պար. 1931. Վճն. 1939)

հաւատարիմ բարեացակամութիւնը եւ օժանդակութիւնը: Չարակեցան նաեւ զազութահայութեան մէջ պատուական անձեր՝ որոնք բարոյապէս եւ նիւթապէս զօրավիգ կանգնեցան իրեն: Ասոնցմէ վեր՝ էջմիածնի Ս. Աթոռոյն իր վրայ ունեցած վստահութիւնն ու համարումը եւ բարձր քաջալերանքը մղեցին դինք գործի եւ արդիւնաւորութեան:

Ամէնէն աւելի եւ առաջ մտադրութիւն դարձուց կրթական գործի վերստին կազմակերպման եւ զօրացման: Ժառանգաւորաց Վարժարանի ուսումնական շրջանը հինգ տարիի վերածեց, եւ անոր մակարդակը բարձրացուց կանոնաւոր երկրորդական վարժարանի, ուսուցման գործին լծեց նոր ուժեր, հոգեւորական եւ աշխարհական ձեռնհաս անձերու յաւելումով ուսուցչական կազմին վրայ: Ստանձնեց անձամբ կարեւոր դասերու աւանդումը, հակառակ որ այլապէս զբաղած էր ծանրօրէն Ս. Աթոռոյ գործերով: Եւ մօտէն հետաքրքրուելով՝ սիրա եւ հոգի դրաւ ձեռնարկին մէջ, որ շուտով պտղաբերեցաւ դեղեցկօրէն, եւ Միաբանութիւնը օտտուեցաւ հետզհետէ զարգացումի եւ ազնիւ հոգիի տէր հոյլ մը երիտասարդ հոգեւորականներով: Իր դահակալութենէն մինչեւ իր վախճանումը ձեռնարկեց տասնեւփեց կուսակրօն քահանաներ — վարդապետներ —, եւ տասներկու սարկաւազներ: Այս վերջիններուն քահանայական ձեռնադրութեան, աւազ որ չհասաւ, հակառակ իր բաղձանքին:

Միաբանութեան նոր սերունդը լծեց գործի, ջանաց եւ պահեց անոր համերաշխութիւնը հին սերունդի հետ, եւ հին ու նոր, միասիրտ եւ միախորհուրդ չիր բարձր ղեկավարութեամբ հետզհետէ աւելի յաջող կերպով զարձուցին Ս. Աթոռոյ գործունէութեան ընդարձակ եւ սարգ մեքենան:

Մասնաւոր ուշադրութիւն ընծայեց վանքէն դուրս նաեւ Պաղեստինի թեմին հայ մանկուոյն կրթութեան գործին: Եւ գործը այնքան յառաջ գնաց որ այսօր մօտ հազար եւ երկու հարիւր փոքրիկներ եւ պատանիներ հայ-քրիստոնէական դաստիարակութիւն եւ ուսմունք կը ստանան Ս. Աթոռոյ կողմէն կառավարուող դպրոցներու մէջ, իբրեւ մանկապարտէզի կամ նախակրթարանի աշակերտներ:

Ձանք ըրաւ, եւ յաջողուց Ս. Աթոռոյն տնտեսական կացութիւնը հաստատելու եւ կանոնաւորելու ձեռնարկը: Այդ մարդին մէջ Ս. Աթոռոյ պաշտօնէութեան օգնութեան համար եւ իրեն իբրեւ խորհրդական կանչեց Ռսկան Պէյ Մարտիկեանը Եգիպտոսէն, եւ հաշուակալական եւ տնտեսական մատակարարման կերպերը աւե-

լի առողջ հիմերու վրայ դրուեցան: Եւ Երուսաղէմի բազմամեայ պարտքը հետզհետէ շիջուցման ճամբուն մէջ դրուեցաւ:

Իր մտադրութիւնը դարձուց նաեւ շինարարութեան: Կարգ մը կայուածներու շինութիւնները իր օրով էր որ սկսան եւ ի գլուխ հանուեցան: Երեսուցաւ Յոպպէի վարժարանը, տակաւին տարի մ'առաջ՝ մօտ 800.000 Փրանքով: Բարդաւաճեցաւ Մեծ Արտ կոչուած դետնին մէկ մասը իր պատրիարքութեան շրջանին:

Սուրբ Տեղեաց իրաւանց պաշտպանութիւնն ալ իր ուշադրութենէն չվրիպեցաւ: Ի գլուխ Միաբանութեան հոգեւորական պաշտօնեաներուն եւ ձեռնհաս ու կարող պիւսանապետին (Տիար Կ. Նուրեան) ըրաւ կարելին:

Իր օրով դեղեցկօրէն արդիւնաւորուեցաւ Ս. Աթոռոյ դրական-մշակութային գործը: Հրատարակուեցան Դուրեան Մատենադարանի շարքին մէջ տասներեք հատորներ իր հսկողութեամբ եւ անձնական աշխատութեամբ, եկամուտովը Դուրեանաչէն կոչուած կալուածին՝ որ կառուցուած էր Դուրեան Յորեկեանէ դոյացած գումարով, եւ ուրիշ շատ մը հատորներ՝ Ս. Աթոռոյ ծախքով: Տպարանը օժտեց նոր եւ արդիական կարգ մը մեքենաներով, նուիրատուութեամբը Եգիպտոսի Յովակիմեան եղբարց: Ծարունակեց ու պայծառացուց Արոն ամսագիրը, որուն խմբագրութիւնը գրեթէ բոլորովին ինք ստանձնեց, եւ որուն մէջ իր առաջնորդող եւ այլ յօդուածները իր արժէքաւոր գրութեանց կարգին կարեւոր տեղ կը գրաւեն:

Հաստատեց Սրբոց Թարգմանչաց-Գրական Մրցանակը, հայկական լուրջ ուսումնասիրութեանց քաջալերանքին եւ զնահատութեան համար:

Այս բոլոր դեղեցիկ գործերէն դատ, զորս ընդհանուր կերպով մը մատնանիչ միայն կ'ընենք հոս, Հոգելոյս Պատրիարքը իր ետին կը թողու գրական կարեւոր արդիւնք մը, իր հեղինակած բազմաթիւ գրքերով եւ գրքոյկներով, որոնցմէ մաս մը տպուած, եւ մաս մ'ալ անտիպ կը մնան տակաւին: Յիշենք ամենակարեւորներէն Խրիմեան Հայրիկը, Աւետարանի քամբէնը, որ անդլիերէնի ալ թարգմանուած եւ զնահատուած է, Նարեկի աշխարհաբար թարգմանութիւնը, Եղիշէ Պատրիարք Դուրեանը, Հնդկահայէք (ձեռագիր), Յորայ Գիրքը (աշխարհաբար թարգմանութեամբ տաղաչափեալ), եւ զանազան թարգմանութիւններ Փրանսերէնէ, Հոգեբանութիւնը Ֆոնսկրիվի, Պողիկտոսը Բոսնէյլի, Էւալին: Ասոնցմէ դատ կատարած է վիճակագրական աշխատութիւններ որոնք անտիպ կը մնան: Կազմած է Սերաստիոյ Ս. Նշան վանքին Ձեռագրաց ցուցակը: Ունի

չարունակեալ եւ մանրամասն օրագրութիւնք իր կեանքին եւ դործունէութեան, ձեռագիր:.....

Հայաստանեայց Եկեղեցւոյ վերջին ժամանակներու ամէնէն փառաւոր դէմքերէն մէկը, եւ Երուսաղէմի Ս. Աթոռին մեծազոր զատրիարքներէն մին էր որ թաղուեցաւ անցեալ կիրակի՝ (12 փոր.) Սուրբ Քաղաքին մէջ, Ս. Փրկչայ վանքին կամարներուն ներքեւ, իր նախորդներուն շարքին, յաւէտ երկիւղած յարգանքի արժանի յիշատակ մը կոթողելով հոն:

ՏԻՐԱՆ ՎՐԴ. Ն.

ԼՅՅ. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ

Հոգեւոյն Սրբազան Պատրիարքին համոզումը մեր Եկեղեցւոյն եւ ազգին յարաբերութեան մասին, առնուած իր տողած ամենավերջին խմբագրականէն:

«Խղճի եւ իրաւունքի դէմ է ազգը բաժնել անջատել իր Եկեղեցիէն, որ անոր դայեակն ու ծնողը նոյնիսկ եղած է, քանի որ ինք անոր մէջ կազմած է ազգային գոյութեան եւ կոչումին դիտակցութիւնը, առանց որուն ժողովուրդ մը չի կրնար ազգ դառնալ եւ տէր մնալ իր ազգային զգացումին:»

(Սիւն, 1939 փոր. ք. 2, էրես 38)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խորին շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց՝ որոնք այցելութեամբ կամ դրով կամ հեռախօսով իրեաց ցաւակցութիւնը յայտնեցին ինձ անձնապէս՝ իմ սիրելի հոգեւոր հօրս, իբրեւ Սրբոց Յակոբեանց Ուխտին միաբան՝ իմ պետիս, եւ իբրեւ Փարիզի Եկեղեցւոյն Տեսչի Փոխանորդ՝ Ս. Երուսաղէմի Հայ Պատրիարքին փառճանման առթիւ: Կը մաղթեմ ամէնուն երկար կեանք, հոգեւոր եւ մարմնաւոր առողջութեամբ: Կը մաղթեմ մանաւանդ, եւ հայցենք ամէնքս Ամէնակալէն, Հյց. Եկեղեցւոյ պալմառութիւն եւ Երուսաղէմի Ս. Աթոռին՝ հաստատութիւն:

ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

15 փոր. 1939, Փարիզ

Հոգեհանգստեան Պաշտօն

ՅԱՌԱՋԻԿԱՅ կիրակի 19 փետրվար, Բուն Բարեկենդանին օրը, փակեալ խորանով, Ս. Պատարազը պիտի մատուցուի յատկապէս ի հանդիստ հոգւոյ Հոգեւոյն

“ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ”

Մե՛ր այ քիւր հասաւ երեսուն եւ եօթնի. Աստուած իմ, պիտոս ինչպէս դէպի Քեզ կը յորդի: Բայց քիւն ի՛նչ կ'արժէ Տէ՛ր, շնորհէ՛ որ որակին Շողայ փայլը մեր մէջ. սրբութեան ջիւղ ոսկին:

Խրնկարոյր կարմիրով լեցուած այս բաժակն ա՛ն: Քամելէ վերջը մէջն ողկոյզներ բոցավառ. Անդողոյ մատներով բայց սնով բռնած վեր՝ Բերեր եմք գայն ընծայ սեղանիդ սրբաւնուէր:

Ա՛ն գայն եւ տո՛ւր ուրիշ մը մեզի փոխարէ՛ն. Մեր ուխտն է որ երսուն եւ եօթներ հո՛ս քերեմ Քեզ, իբրեւ ձօն Յոյսի, Հաւատքի եւ Սիրոյ, Անարատ կեանքերու գոհեր միշտ ի նորոյ:

Որ այս հողն օրհնուած. ոռոգուած բու աջով. Ունացնէ միշտ առո՛ք հասկեր եւ որքեր ջով. Որ նրագիդ սուրբ իւղին մընայ յայս անշէջ. Ու «Անձինք Նուիրեալք»ն իրնչէ միշտ այս Տան մէջ:

Թ(ՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԿ)

Խափօքութիւն.

Այս քերթուածը (դրուած աղբասանգրեան չափով, 6+6) կերպով մը պարագայական է. գրուած 1936էն նստ, երբ երկու կուսակրօն քահանաներու — վարդապետներու — ձեռնադրութեամբ, Միաբանութեան վարդապետ եւ եպիսկոպոս անդամներուն թիւը հասած էր երեսուն եւ եօթնի: Երեսուն եւ եօթը թիւն է նաեւ Հըսիսիսիմեանց Կոյսերուն, որոնք նահատակուեցան Տըրքաւ թաղաւորի ձեռքով, անոր քրիստոնեայ ըլլալէն առաջ: «Անձինք Նուիրեալք» առաջին բառերն են այդ կոյսերու մարտիրոսացման տօնին առթիւ. Եկեղեցւոյ մէջ երգուած օրհնութեան — շարականին: Երկրորդ եւ երրորդ տունով կ'ակնարկէ Ս. Պատարազին եւ անով՝ անձերու Աստուծոյ նուիրումին: Իսկ չորրորդ տան մէջ՝ «Հող»ը Սուրբ Երկիրն է, իսկ «Տուն»ը՝ Ս. Յակոբեանց վանքը: